

# 2009 H1N1 ԻՆՖԼՈՒԵՆԶԱՅԻ ՊԱՏՎԱՍ

**ԿԵՆԴԱՆԻ, ԹՈՒԼԱՅՎԱԾ**  
**(Միջոցառումները գործող պատվաստ)**

**ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԴՈՒՔ ԻՍԱԼԱՔ**

Պատվաստի մասին ճշտ տեղեկություններ Կան Իսպաններենով եւ Այլ Լեզուներով: Տես [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis):

## 1 ԻՆՉ Ե 2009 H1N1 ԻՆՖԼՈՒԵՆԶԱՆ:

2009 H1N1 ինֆլուենզան (երբեմն կոչվում է Խոզի գրիպ) առաջանում է ինֆլուենզայի մանրէի նոր դեֆորմացիայից: Այն տարածվել է շատ երկրներում:

Գրիպի մյուս մանրէների նման, 2009 H1N1-ը տարածվում է մարդուց մարդ՝ հագից, փռչողոցից, եւ երբեմն մանրէով վարակված առարկաներին ձեռք տալուց:

2009 H1N1-ի նշանները կարող են ներառել.

- Հոգնածություն
- Տաքություն
- Կոկորդի ցավ
- Մկանային ցավեր
- Դող
- Հագ
- Փռչողոց

Որոշ մարդիկ ունենում են նաեւ փորհարություն եւ փսխումք:

Մեծ մասը լավ է զգում մեկ շաբաթվա ընթացքում: Բայց որոշ մարդիկ հիվանդանում են թոքերի բորբոքումով կամ այլ լուրջ հիվանդություններով: Որոշ մարդիկ պետք է հոսպիտալացվեն, եւ ոմանք մահանում են:

## 2 2009 H1N1-ը ինչպե՞ս է տարբերվում սովորական (սեզոնային) գրիպից:

Սեզոնային գրիպի մանրէները տարեցտարի փոխվում են, բայց դրանք սերտորեն կապակցված են իրար հետ:

Մարդիկ, ովքեր անցյալում վարակվել են գրիպով, սովորաբար որոշակի իմունիտետ ունեն սեզոնային գրիպի մանրէների հանդեպ (նրանց մարմինները մանրէների դեմ պայքարելու որոշ կարողություն են ձեռք բերել):

2009 H1N1 գրիպի մանրէն մանրէի նոր դեֆորմացիա է: Դա սեզոնային գրիպի մանրէից շատ տարբեր է:

Ճատ մարդիկ 2009 H1N1-ի գրիպի նկատմամբ թույլ իմունիտետ ունեն կամ երբեք չունեն (նրանց մարմինները պատրաստված չեն մանրէի դեմ պայքարելու համար):

## 3 2009 H1N1 ինֆլուենզայի պատվաստը

2009 H1N1 ինֆլուենզայի դեմ պաշտպանվելու պատվաստները տրամադրվում են:

- Այս պատվաստները պատրաստված են ճիշտ սեզոնային գրիպի պատվաստների նման:
- Դրանք պետք է որ նույնքան ապահով եւ արդյունավետ լինեն, ինչպես սեզոնային գրիպի պատվաստները:
- Դրանք չեն կանխարգելի այլ մանրէների պատճառած «ինֆլուենզային նմանվող» հիվանդությունները:
- Դրանք չեն կանխարգելի սեզոնային գրիպը: **Եթե դուք ուզում եք պաշտպանված լինել սեզոնային գրիպից, պայքարեք պետք է նաեւ սեզոնային ինֆլուենզայի պատվաստ ստանաք:**

**Կենդանի, թուլացված, միջոցառումներ** (կամ LAIV-ը) գործում է քթանցքի մեջ: Այս թերթիկը նկարագրում է կենդանի, թուլացված, միջոցառումները:

**Չակտիվացված** պատվաստը նույնպես տրամադրվում է, որը տրվում է սրկման ձեւով: Դա նկարագրված է առանձին թերթիկում:

2009 H1N1 LAIV-ը թիմերով կամ այլ պահպանիչներ չի պարունակում: Դա արտոնված է 2-ից մինչեւ 49 տարեկան մարդկանց:

Պատվաստի մանրէն թուլացված է (տկարացված է), այսպիսով դա հիվանդություն չի պատճառում:

## 4 Ո՞վ պետք է ստանա 2009 H1N1 ինֆլուենզայի պատվաստ եւ ե՞րբ:

ՈՎ

LAIV-ը հանձնարարվում է 2-ից մինչեւ 49 տարեկան մարդկանց, որոնք հղի չեն եւ որոնք առողջապահական որոշակի խնդիրներ չունեն (տես # 5, ներքեւում): Խմբերը, որոնց հանձնարարվում է ստանալ 2009 H1N1 LAIV բոլորից առաջ, առողջ մարդիկ են, որոնք.

- 2-ից մինչեւ 24 տարեկան են,
- 25-ից մինչեւ 49 տարեկան են, եւ
  - ապրում են 6 ամսականից փոքր երեխաների հետ կամ խնամում են նրանց, կամ
  - առողջապահական կամ արտակարգ խնամքի բժշկական անձնակազմի անդամներ են:

Երբ պատվաստի ավելի շատ քանակ է տրամադրելի լինում, 25-ից մինչեւ 49 տարեկան մյուս առողջ մարդիկ նույնպես պետք է պատվաստվեն:

**Ճանաթություն.** Մինչ որոշակի խմբեր պետք չէ LAIV ստանալ, օրինակ՝ հղի կանայք, երկարաժամկետ առողջապահական խնդիրներ ունեցող մարդիկ եւ 6 ամսականից մինչեւ 2 տարեկան երեխաները, կարելի է, որ նրանք պատվաստվեն: Նրանք պետք է ստանան գրիպի սրկում:

Դաշնակցային կառավարությունը մատակարարում է այս պատվաստը՝ կամավորական հիմունքով ստանալու համար: Սակայն նահանգային օրենքը կամ գործատերերը կարող են պահանջել որոշակի մարդկանց պատվաստումը:

**ԵՐԲ**

Պատվաստվիր անմիջապես, երբ պատվաստը տրամադրելի լինի:

Մինչեւ 9 տարեկան երեխաները պետք է ստանան պատվաստի երկու չափաբաժին, մոտ մեկ ամիս տարբերությամբ: Ավելի մեծ երեխաները եւ չափահասները կարիք ունեն միայն մեկ չափաբաժին:

**5 Որոշ մարդիկ պետք է պատվաստ ստանան կամ պետք է սպասեն**

Դուք պետք է ստանաք 2009 H1N1 LAIV, եթե դուք **ծվի կամ պատվաստի մեջ գտնվող բաղադրանյութերի** նկատմամբ **ծանր (կյանքի համար վտանգավոր) ակերզիա** ունեք: *Ձեզ պատվաստող անձին տեղեկացրեք, եթե դուք որեւէ ծանր ակերզիա ունեք:*

- 2009 H1N1 LAIV-ը պետք է տրվի հետևյալ խմբերին.
- 2 տարեկանից փոքր երեխաներին եւ 50 տարեկան եւ ավելի մեծ չափահասներին,
  - հղի կանանց,
  - տկար իմունային համակարգ ունեցող որեւէ մեկին,
  - որեւէ մեկին, որ երկարաժամկետ առողջապահական խնդիր ունի, ինչպես.
    - սրտի հիվանդություն - թոքերի հիվանդություն
    - ասթմա - երիկամի կամ լյարդի հիվանդություն
    - Նյութափոխանակության հիվանդություն, ինչպես՝ շաքարախտ
    - սակավարյունություն եւ արյան հետ կապված այլ խանգարումներ
  - ասթմա ունեցող կամ նախորդ տարում մեկ կամ ավելի անգամներ շնչառգելություն ունեցած 5 տարեկանից փոքր երեխաներին,
  - որեւէ մեկին, որ որոշակի մկանային կամ նյարդային խանգարում ունի, (ինչպես՝ ուղեղային կաթված), որը կարող է առաջացնել շնչառական կամ կուլ տալու խնդիրներ,
  - որեւէ մեկին, ով մոտիկ շփման մեջ է *ծանրորեն* թուլացած իմունային համակարգ ունեցող որեւէ մարդու հետ (որոնց համար խնամք է պահանջվում պաշտպանված միջավայրում, ինչպես, օրինակ, ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունքում),
  - երեխաներին կամ պատանիներին, ովքեր ասպիրինով երկարաժամկետ բուժման ընթացքի մեջ են:

Եթե դուք չափավոր կամ ծանր հիվանդ եք, ձեզ խորհուրդ կտրվի սպասել մինչև առողջանալը, նախքան դուք պատվաստը կստանաք: Եթե դուք թեթև մրսածություն կամ այլ թեթև հիվանդություն ունեք, սովորաբար սպասելու կարիք չկա:

- Ասեք ձեր բժշկին, եթե դուք երբեւէ ունեցել եք.
- կյանքի համար վտանգավոր ակերզիկ ռեակցիա գրիպի պատվաստի սեզոնային չափաբաժինը ստանալուց հետո,
  - Guillain-Barré Սինդրոմ (ծանր անդամալուծող հիվանդություն, որը նույնպես կոչվում է GBS):

Սրանք կարող են պատճառներ չլինել պատվաստը մերժելու համար, բայց բժշկական անձնակազմը կարող է օգնել ձեզ որոշում կայացնելու:

2009 H1N1 LAIV-ը կարող է տրվել նույն ժամանակ, ինչպես մնացած շատ պատվաստներ: Ասեք ձեր բժշկին, եթե դուք նախորդ ամսում ստացել եք որեւէ այլ պատվաստ կամ ծրագրում եք հաջորդ ամսում ստանալ: H1N1 LAIV-ը եւ սեզոնային LAIV-ը չեն կարող միասին տրվել:

**6 Ի՞նչ են 2009 H1N1 LAIV-ի վտանգները:**

Պատվաստը մյուս դեղերի նման կարող է լուրջ պոռթում առաջացնել, ինչպես ծանր ակերզիկ ռեակցիա: Բայց որեւէ պատվաստի՝ ծանր վնաս կամ մահ առաջացնելու վտանգը չափազանց փոքր է:

2009 H1N1 LAIV-ի վտանգները ակնկալվում են, որ կլինեն նույնը, ինչ որ սեզոնային LAIV-ինը:

- Թեթև խնդիրներ.**
- 2-17 տարեկան երեխաների եւ պատանիների մոտ գրանցվել են մեղմ ռեակցիաներ, ներառյալ.
- հոսող քիթ, քթի խցանում կամ հազ
  - տաքություն,
  - գլխացավ եւ մկանային ցավեր,
  - շնչառգելություն
  - որովայնի ցավեր կամ երբեմն սրտխառնուք կամ փորհարություն

- 18-49 տարեկան որոշ մեծահասակների մոտ գրանցվել են.
  - հոսող քիթ կամ քթի խցանում
  - կոկորդի ցավ
  - հազ, դող, հոգնածություն/թուլություն
  - գլխացավ

- Ծանր խնդիրներ.**
- Պատվաստի հետեւանքով կյանքին սպառնացող ակերզիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե դրանք պատահեն, դա կլինի ներարկումից ընդամենը մի քանի ռուպեցի մինչև մի քանի ժամկա ընթացքում:
  - 1976-ին չակտիվացված խոզի գրիպի պատվաստի նախնական տեսակը առընչեցին Guillain-Barré Սինդրոմի դեպքերի հետ (GBS): LAIV-ը չի առընչվում GBS-ին:

**7 Ի՞նչ անել ծանր ռեակցիայի դեպքում:**

**Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:**  
 Որեւէ անսովոր վիճակի, ինչպես բարձր տաքություն կամ վարքագծի փոփոխություն: Ծանր ակերզիկ ռեակցիայի նշաններ կարող են լինել ծանր շնչառությունը, խռչոտությունը կամ խռչոտոցը, ցաները, գունատությունը, թուլությունը, սրտի արագ բարբախումը կամ գլխապտույտը:

- Ես ի՞նչ պետք է անեմ:**
- **Չանգեք** բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
  - **Ասեք** բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
  - **Խնդրեք** ձեր խնամատարին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակադեցուցման Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձև: Կամ դուք կարող եք տեղեկագրող գրանցել VAERS կայքում [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) հասցեով կամ զանգել **1-800-822-7967** համարով:


VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

**8 Պատվաստի վնասվածքի փոխհատուցում**


Եթե դուք կամ ձեր երեխան պատվաստից ռեակցիա եք ունեցել, ապա դատի տալու ձեր հնարավորությունը սահմանափակվում է օրենքով: Այնուամենայնիվ, ստեղծվել է դաշնակցային մի ծրագիր՝ վճարելու պատվաստից լուրջ ռեակցիա ունեցող որոշ մարդկանց բժշկական խնամքի եւ այլ հատուկ ծախսերի համար: Այս ծրագրի մասին հավելյալ տեղեկություններ իմանալու համար զանգեք **1-888-275-4772** համարով կամ այցելեք ծրագրի կայքը՝ [www.hrsa.gov/countermeasurescomp/default.htm](http://www.hrsa.gov/countermeasurescomp/default.htm):

**9 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:**

- Հարցրեք ձեր խնամատարին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկություն այլ աղբյուրներ:
- Չանգեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
  - Չանգեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
  - Այցելեք CDC-ի կայքը՝ [www.cdc.gov/h1n1flu](http://www.cdc.gov/h1n1flu) կամ [www.cdc.gov/flu](http://www.cdc.gov/flu)
  - Այցելեք կայքը՝ [www.flu.gov](http://www.flu.gov)



DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES  
CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION



Vaccine Information Statement  
2009 H1N1 LAIV IMM-979AN – Armenian (10/2/09)  
Translated by Transcend Translations, Davis, CA

42 U.S.C. §300aa-26  
[www.transcend.net](http://www.transcend.net)